ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2022 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 193-Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի ԹԻՎ 102-Լ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 146-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2022 թվականի ապրիլի 22-ի «Հաշվեքննիչ պալատի ֆինանսական հաշվեքննության մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 102-Լ որոշման՝
   1) հավելվածի 4–րդ բաժնի 4.4-րդ ենթաբաժինը լրացնել նոր պարբերությամբ՝ «Հաշվեքննության պլանի կազմումից հետո, ամենամսյա պարբերականությամբ, համակարգող Հաշվեքննիչ պալատի անդամին է ներկայացվում զեկույց հաշվեքննության առաջընթացի վերաբերյալ՝ կիրառելով «Ձև 3.2 - Հաշվեքննության առաջընթացի զեկույց» աշխատանքային փաստաթուղթը: Հաշվեքննիչ պալատի համակարգող անդամն առաջընթացի զեկույցը շրջանառում է Հաշվեքննիչ պալատի մյուս անդամների միջև՝ Հաշվեքննիչ պալատի գործավարության կարգի համաձայն

և/կամ հաշվեքննությունների հաշվառման (փաստաթղթավորման) համար նախատեսված էլեկտրոնային համակարգի միջոցով:»:

2) հավելվածը Ձև 3.1-ից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ Ձև 3.2-ով՝

« **Ձև 3.2**

Հաշվեքննության առաջընթացի զեկույց

Ծրագրային կետ՝	Նշել անվանումը	Զեկույցի ժամանակաշրջան՝	Նշել հաշվետու ամիսը
ՀԻԿՍ-ի ղեկավար՝		Զեկույցը պատրաստեց՝	
Նշել անուն ազգանունը		Նշել զեկույցը պատրաստողի պաշտոնը, անուն ազգանունը	

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված գործողությունները			
Գործողություն	Ամսաթիվ		Մեկնաբանություններ
	Պլանավորված	Փաստացի կատարման	
			Կատարել հղում պատրաստված աշխատանքային փաստաթղթերին:
Հաշվեքննության ընթացքում հանդիպած մարտահրավերները և դրանց հաղթահարմանն ուղղված գործողությունները՝			
Ընթացիկ ռիսկերը և հաշվեքննության սահմանափակումները՝			
Հաշվեքննողների կողմից հայցվող օգնության կամ որոշումների կայացման մասին տեղեկություններ՝			
Ամսաթիվ՝		Ստորագրություն՝	

»:

2. Հաշվեքննիչ պալատի 2022 թվականի հունիսի 30-ի «Հաշվեքննիչ պալատի կատարողականի հաշվեքննության մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 146-Լ որոշման հավելվածի 75-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ՝

ա. «Հաշվեքննիչ պալատի համակարգող անդամն առաջընթացի զեկույցը շրջանառում է Հաշվեքննիչ պալատի մյուս անդամների միջև՝ Հաշվեքննիչ պալատի

գործավարության կարգի համաձայն և/կամ հաշվեքննությունների հաշվառման (փաստաթղթավորման) համար նախատեսված էլեկտրոնային համակարգի միջոցով:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱՋՅԱՆ